**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3**
**«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-8/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ**
**ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան

27-ը դեկտեմբերի 2016թ
ժամը $10^{00}$

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝***

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ թիկունքային ապահովման վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյան,

**գնահատողներ՝**

ՀՀ ՊՆԱ ՎՏ վարչության պետի տեղակալ Լ.Խաչատրյան,

ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի թիկունքային ապահովման վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ռուստյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ սպա, մայոր Ա. Հակոբյան,

**Գնումները համակարգող՝**

Գնումները համակարգող նշանակել ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Ա.Մաղաքյանին

**«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.**

1. Տեղեկություններ հայտ /գնային առաջարկ/ ներկայացրած և չներկայացրած մասնակիցների մասին.

2.«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հարցում պարունակող հայտերի կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հարցման պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

4.Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին:

5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.**

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «**Գրենական պիտույքներ եվ գրասենյակային նյութերի**» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԾՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակցի անվանում |
|---|---|
| 1 | «Լիմուշ» ՍՊԸ |
| 2 | «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ |
| 3 | «Անտարես» ՍՊԸ |
| 4 | «Միարմա գրուպ» ՍՊԸ |
| 5 | «Արմքոմփփիններ» ՍՊԸ |
| 6 | «Յասոն» ՍՊԸ |
| 7 | «Սաքի» ՍՊԸ |
| 8 | «Շուշան տեխնիկս» ՍՊԸ |
| 9 | «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ |
| 10 | «Սմարթլայն» ՍՊԸ |
| 11 | «Մեգա-Պեյ պեր» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2 .«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հարցում պարունակող էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հարցման պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.**

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով /հարցումով/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «**ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/1**» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով /հարցումով/ սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.

- «Շուշան տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում կազմակերպության տնօրեն նշված էր Կ. Բաղրամյանը, սակայն փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ստորագրված էին Վերա Կարապետյանի կողմից: Որպեսզի էլեկտրոնային ստորագրության առկայությունը հանձնաժողովի կողմից գնահատվեր բավարար, անհրաժեշտ էր ներկայացնել Վերա Կարապետյանի կողմից «Շուշան տեխնիկս» ՍՊԸ-ի հայտը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու իրավասության վերաբերյալ լիազորագիր,
- «Տիգրան մեծ» հրատարակչություն ՓԲԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում կազմակերպության տնօրեն նշված էր Տ. Քոթանջյանը, սակայն փաստաթղթերը էլեկտրոնային եղանակով ստորագրված էին Լյուդվիգ Հարոյանի կողմից: Որպեսզի էլեկտրոնային ստորագրության առկայությունը հանձնաժողովի կողմից գնահատվեր բավարար, անհրաժեշտ էր ներկայացնել Լյուդվիգ Հարոյանի կողմից «Տիգրան մեծ» հրատարակչություն ՓԲԸ-ի հայտը էլեկտրոնային ստորագրությամբ հաստատելու իրավասության վերաբերյալ լիազորագիր,
- «Միարմա գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտի N 1 հավելվածը չէր համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ դրանով հստակ պետք է նշվի, թե յուրաքանչյուր չափաբաժնով նախատեսված ապրանքատեսակը, որ երկրի արտադրանք է հանդիսանում,
- «Կոմպյուտեր սերվիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտի N 1 հավելվածը չէր համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ դրանով հստակ պետք է նշվի, թե յուրաքանչյուր չափաբաժնով նախատեսված ապրանքատեսակը, որ երկրի արտադրանք է հանդիսանում,
- «Մեգա-Պեյպեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտի N 1 հավելվածը չէր համապատասխանում հրավերի պահանջներին, քանի որ դրանով հստակ պետք է նշվի, թե յուրաքանչյուր չափաբաժնով նախատեսված ապրանքատեսակը, որ երկրի արտադրանք է հանդիսանում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրեց հայտերի գնահատման նիստը և առաջարկել մասնակիցներին սահմանված կարգով (վերը նշված որոշման 46-րդ կետ) մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Բոլոր մասնակիցների կողմից սահմանված ժամկետում անհամապատասխանությունը շտկվեցին:

Հիմք ընդունելով նշված փաստը՝ հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը գնահատել բավարար և հրավերի պայմանների համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**3. <u>Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին</u>**

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները. տես սույն արձանագրությանը կից Հավելված N 1

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի՝

Հանձնաժողովը որոշեց՝ 25-րդ և 53-րդ չափաբաժինների մասով մերժել «ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ-ի, 4-րդ, 22-րդ, 28-րդ չափաբաժինների մասով մերժել «Սմարթլայն» ՍՊԸ-ի, 6-րդ, 25-րդ, 29-րդ 58-րդ և 61-րդ չափաբաժինների մասով մերժել «Միարմա գրուպ» ՍՊԸ-ի հայտերը, քանի որ ներկայացված գնային առաջարկներում «ինքնարժեք», «շահույթ» և «ԱԱՀ» բաղադրիչների թվային հանրագումարը չէր համապատասխանում առաջարկված ընդամենը գներին՝ այսինքն մասնակիցների ներկայացրած հավելված N4-ը տվյալ չափաբաժինների մասով չէին համապատասխանում հրավերի պահանջներին:

3.3 Քանի որ ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով ընթացակարգի 23-րդ չափաբաժնի մասով առկա էր առաջարկված նվազագույն գների հավասարություն, գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների

գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի պահանջները, գների նվազեցման նպատակով 16.01.2017թ. ժամը 11:00-ին ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) բավարար գնահատված և տվյալ չափաբաժինների մասով գնային առաջարկ ներկայացրած բոլոր մասնակիցների («Միարմա գրուպ», «Արմքոմփիլիններ», «Յասոն», «Սմարթլայն», «Սաքի», «Մեգա-Պեյ պեր» ՍՊԸ-ների) հետ կազմակերպվեցին բանակցություններ: Նշանակված բանակցությանը ներկայացավ միայն «Սմարթլայն» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, որն էլ համաձայնվեց 23-րդ չափաբաժնի գինը նվազեցնել 2,067,072 (երկու միլիոն վաթսունյոթ հազար յոթանասուներկու) դրամի:

3.4 Ըստ ներկայացված տվյալների «Շուշան տեխնիկս» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**4. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.**

4.1 18 .01.2017թ. «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի տարբեր չափաբաժիններում 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեցին հետևյալ մասնակիցները՝ տես Հավելված N 1: ***Մնացած մասնակիցները ճանաչվեցին հաջորդաբար այլ տեղեր զբաղեցնողներ՝ ըստ ներկայացված գների շահավետության:***

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերի 7.5 կետով նախատեսված փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց հրավիրել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետով նախատեսված համապատասխան հարցում ներկայացնել առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**5. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին**

5.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.**

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-8/1» ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը $11^{00}$-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Վ. Գասպարյան |
| Գնահատող՝ | Գ. Ուստյան |
| Գնահատող՝ | Լ. Խաչատրյան |
| Գնահատող՝ | Ա. Հակոբյան |
| Գնումները համակարգող՝ | Ա. Մաղաքյան |

| Հ/հ | Գնման առարկա | Չ/Մ | Քանակ | «Լիմուշ» ՍՊԸ | | «Կոմպյուտեր Սերվիս» ՍՊԸ | | «Անտարես» ՍՊԸ | | «Միարմա գրուպ» ՍՊԸ | | «ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ | | «Ցասոն» ՍՊԸ | | «Մաքի» ՍՊԸ | | «Շուշան տեխնիկս» ՍՊԸ | | «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ | | «Սմարթլայն» ՍՊԸ | | «Մեգա-Պեյ պեր» ՍՊԸ | | I-ին տեղ(հաղթող) զբաղեցնող մասնակից |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ | |
| 41 | Սեղմակ միջին | հատ | 900 | | | | | | | 12,600 | 10,500 | | | | | | | | | | | 16,200 | 13,500 | | | «Միարմա գրուպ» ՍՊԸ |
| 42 | Սեղմակ մեծ | հատ | 600 | | | | | | | 13,200 | 11,000 | | | | | | | | | | | 13,800 | 11,500 | | | «Միարմա գրուպ» ՍՊԸ |
| 43 | Կարիչի մետաղալարե կապեր փոքր | տուփ | 2845 | | | | | | | | | | | | | | | | | | | 142,250 | 118,542 | 153,630 | 128,025 | «Սմարթլայն» ՍՊԸ |
| 44 | Կարիչի մետաղալարե կապեր միջին | տուփ | 4166 | | | | | | | | | | | | | | | | | | | 291,620 | 243,017 | 437,430 | 364,525 | «Սմարթլայն» ՍՊԸ |
| 45 | դանակ գրասենյակային մետաղյա մեծ | հատ | 1820 | | | | | | | | | | | | | | | | | | | 118,300 | 98,583 | | | «Սմարթլայն» ՍՊԸ |
| 46 | Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ [illegible] մեծ | հատ | 705 | | | | | | | 204,450 | 170,375 | | | | | | | | | | | 267,900 | 223,250 | 408,900 | 340,750 | «Միարմա գրուպ» ՍՊԸ |
| 47 | Ամրակ, մետաղյա, մեծ | տուփ | 1122 | | | | | | | 246,840 | 205,700 | | | | | | | | | | | 218,790 | 182,325 | | | «Սմարթլայն» ՍՊԸ |
| 48 | Ամրակ, մետաղյա, փոքր | տուփ | 4732 | | | | | | | 425,880 | 354,900 | | | | | | | | | | | 369,096 | 307,580 | 378,560 | 315,467 | «Սմարթլայն» ՍՊԸ |
| 49 | Սրիչ, սովորական | հատ | 1163 | | | | | | | | | | | | | | | | | | | 52,335 | 43,613 | | | «Սմարթլայն» ՍՊԸ |
| 50 | Մկրատ, գրասենյակային | հատ | 780 | | | | | | | | | | | | | | | | | | | 152,100 | 126,750 | 436,800 | 364,000 | «Սմարթլայն» ՍՊԸ |
| 51 | Գուաշ | հատ | 257 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | Առաջարկի բացակայություն |
| 52 | Ասեղ | հատ | 298 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | առաջարկի բացակայություն |
| 53 | Թել | հատ | 600 | | | | | | | | | 108,000 | 90,000 | | | | | | | | | | | | | Հրավերի պահանջներին չհամապատասխանող առաջարկ |
| 54 | Թանաք | հատ | 2 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | Առաջարկի բացակայություն |
| 55 | Կավիճ գրելու տուփերով | տուփ | 5196 | | | | | | | | | | | | | | | | | | | 389,700 | 324,750 | | | «Սմարթլայն» ՍՊԸ |
| 56 | Մատիտ ապակու | հատ | 380 | | | | | | | | | 144,400 | 120,333 | | | | | | | | | | | | | «ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ |
| 57 | Շտամպի բարձիկ տուփով | հատ | 515 | | | | | | | | | | | | | | | | | | | 139,050 | 115,875 | 262,650 | 218,875 | «Սմարթլայն» ՍՊԸ |
| 58 | Բաղադրանյութ (շտրիխ) | հատ | 3406 | | | | | | | 493,870 | 411,558 | | | | | | | | | | | 561,990 | 468,325 | 681,200 | 567,667 | «Սմարթլայն» ՍՊԸ |
| 59 | Վրձին, նկարչական աշխատանքներ կատարելու համար | հատ | 357 | | | | | | | | | | | | | | | | | | | 12,495 | 10,413 | | | «Սմարթլայն» ՍՊԸ |
| 60 | Տուշ | հատ | 880 | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | Առաջարկի բացակայություն |
| 61 | Օրացույց, սեղանի | հատ | 350 | | | | | | | | | 175,000 | 145,833 | | | | | | | | | 203,000 | 169,167 | | | «ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ |
| 62 | Էմոպսիա | հատ | 1011 | | | | | | | 1,056,495 | 880,413 | 1,213,200 | 1,011,000 | | | | | | | | | | | | | «ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ |
| 63 | Կարկին | հատ | 78 | | | | | | | | | 46,800 | 39,000 | | | | | | | | | | | | | «ԱՐՄՔՈՄՓՎԻՆՆԵՐ» ՍՊԸ |

Անցկացված բանակցությունների արդյունքում «Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից 23-րդ չափաբաժնի մասով առաջարկված 2,076,300 դրամ գինը նվազեցրեց 2,067,072 դրամի:

Հանձնաժողովի նախագահ Վ. Գասպարյան

Գնահատող՝ Գ. Ուստյան

Գնահատող՝ Լ. Խաչատրյան

Գնահատող՝ Ա. Հակոբյան